ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2025 թվականի N 953 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 271-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 3-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՖԱՆՖՐՈՒԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և «ՖԱՆՖՐՈՒԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության և «ՖԱՍԹ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ արտոնությունը կիրառելու մասին» N 271-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 1.1-ին կետում «ցանկի 3-րդ, 4-րդ, 16-րդ և 17-րդ կետերի» բառերը փոխարինել «ցանկի 3-րդ, 4-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ կետերի» բառերով.

2) 1.1-ին կետում «, L00000008 և L00000006» թվերը փոխարինել «, L00000008, L00000006, L00000100, L00000099» թվերով.

3) որոշման հավելվածը 19-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-21-րդ կետերով.

«

20.	8701211011	Volvo (Վոլվո) մակնիշի քարշակներ	Նոր անվավոր նստատեղերով քարշակներ՝ կիսակցորդների համար, միայն սեղմումով բոցա-վառվող ներքին այրման մխոցային շարժիչով (դիզելով կամ կիսադիզելով)՝	հատ	7	ԵՄ երկրներ	ԵՄ երկրներ, Վրաստան	460 000 000	Լիզինգի պայմանագիր թիվ L00000100
21.	8716393002	Schmitz Cargobull (Շմից Կագոբուլ) մակնիշի կցորդներ և կիսակցորդներ	Նոր կցորդներ և կիսակցորդներ սառ-ցարանային ավտո-մոբիլների՝ 76մ³-ից ոչ պակաս թափքի ներքին ծավալով	հատ	7	ԵՄ երկրներ	ԵՄ երկրներ, Վրաստան	270 000 000	Լիզինգի պայմանագիր թիվ L00000099

».

4) հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «4 484 190 500» թիվը փոխարինել «5 214 190 500» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ